

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈԻԼ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2015

9-րդ դասարան (տևողությունը 180 րոպե)

1. Տեղադրե՛ք համապատասխան բառը 3 (միավոր):

ա. Սպարտակը քաջության և ուժի (պատճառով, շնորհիվ) մտավ հռոմեական լեգեոններից մեկի մեջ:

բ. Եթե Կրասոսը հետևեր Արտավազդի (խորհուրդ, խորհրդածություն), ապա պարթևները չէին կարող դիմադրել:

գ. Հասմիկը Սունդուկյանի անվան թատրոնի (հազվադեպ, հազվագյուտ) դերասաններից էր:

2. Տրված բառերի դիմաց գրե՛ք մեկական հոմանիշ (2 միավոր).

առինքնել, ժուժկալ, խարազանել, աներկբա :

3. Ճամփա և ծանր բառերով գրե՛ք մեկական դարձվածք և բացատրե՛ք իմաստները (1 միավոր):

4. Տրված բառաշարքից ընտրե՛ք այն բառերը, որոնք երևույթի հաճախակի կրկնություն, պարբերականություն ցույց տալու դեպքում կկազմեն հոգնակի թիվ (2 միավոր).

տարի, շոգ, ամիս, ժամանակ, սառնամանիք, վայրկյան, դար, անձրև, րոպե, կարկուտ:

5. Կազմե՛ք երկուական հավաքական գոյական –եղեն, -անի, -ություն վերջածանցներով (3 միավոր):

6. Նշե՛ք՝ ո՞ր հայերենով է տրված հատվածը (1 միավոր):

Թաղականին գործն ալ այսօր լմնցուցինք. կիրակի օրը քվեարկությունը պիտի կատարվի, և բոլոր անդամները պատվավոր մարդիկ պիտի ըլլան:

7. Տրված բանաստեղծական հատվածում նշե՛ք արտահայտչական-պատկերավորման միջոցները (3 միավոր):

Աղբյուրն անուշ հեքիաթի պես

Իր լույս երգով ժպտում է մեզ.

Դու մոտեցար մեղմ, համրաքայլ

Որպես քնքուշ իրիկվա փայլ:

8. Շարադրություն՝ <<Հնչում է կոմիտասյան մեղեդին ... >> վերնագրով

(2 էջի սահմաններում) (5 միավոր):

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈԻԼ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2015

10-րդ դասարան (տևողությունը 180 րոպե)

1. Գտե՛ք բառագործության սխալը և նշե՛ք ճիշտ բառը (3 միավոր):

ա. Արգիշտիի գործունեության մասին հիշատակված է սեպագիր արձանագրություններում՝ Խոռխոռյան տարագրության մեջ:

բ. Ըստ ավանդույթի՝ առաջին ճարտարապետը, նկատելով, որ աշտարակը զգալի թեքվել է, գործը կհաստ է թողնում:

գ. Աշնան մի թախծոտ ու սրտմաշոք օր Մոսկվայից Երևան էի վերադառնում:

2. Երես և գրպան բառերով գրե՛ք երկուական դարձվածք և բացատրե՛ք իմաստները (2 միավոր):

3. Նշե՛ք տրված հարանուն բառերի իմաստները (1 միավոր):

ա. ցուցում

բ. պարտականություն

ցուցմունք

պարտավորություն

4. Կազմե՛ք մեկական՝

գոյական գեր-, -իչ ածանցներով,

ածական -յան, -եղեն ածանցներով,

մակբայ -գին, -անց ածանցներով (3 միավոր):

5. Գրաբարով տրված նախադասությունը թարգմանե՛ք աշխարհաբար (2 միավոր):

Բայց գտեղի ճակատուն շինե՛ դաստակերտ և անուն կոչե՛ Հայք:

6. Նշե՛ք՝ հայերենի ո՞ր տարբերակով է տրված հատվածը (1 միավոր):

Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ անձայն, անհանդես,

Երթա՛լ առվին պես՝ մարգերու տակ անտես:

7. Տրված բանաստեղծական հատվածում նշե՛ք արտահայտչական - պատկերավորման միջոցները (3 միավոր):

Ինչի՞ց է, որ Հայաստանում

Ջրերը չեն հանգստանում,

Այլ քարեքար ընկած այսպես՝

Հնուց ի վեր գծվածի պես

Շառաչում են կիրճերն ի վար:

8. Շարադրություն «Հնչում է կոմիտասյան մեղեդին ...» վերնագրով (2 էջի սահմաններում) (5 միավոր):

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈԻԼ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2015

11-րդ դասարան (տևողությունը 180 րոպե)

- 1. Նախադասություններում գտե՛ք բառագործածության սխալը, գրե՛ք ճիշտ բառը (3 միավոր):**
ա. Թաթարները մեծ հաճույքով ընդունեցին հրավերքը. կիլիկիացիները լավ հյուրընկալներ են:
բ. Գետի աջ ու ահյակ ափերին խոնված նվագարաններն ու ծաղրածուները մոռացան եռապետի պատվերը:
գ. Տրդատն իմանում է Գրիգորի՝ քրիստոնեական ուսումին հետևելու մասին և հարկադրում է երկրպագել հեթանոս աստվածներին:
- 2. Բացատրե՛ք տրված դարձվածքների իմաստները (2 միավոր).**
Բերենիկեի ծամեր, դափնիների վրա հանգստանալ, թները քամուն տալ, հորթի հրճվանք:
- 3.Տրված բառերի դիմաց գրե՛ք երկուական հոմանիշ (2 միավոր).**
մուճակ, ներհուն, շաղակրատել, ջատագովել :
- 4.Կազմե՛ք մեկական՝**
գոյական –ացու, -եղեն, ածանցներով,
ածական հակ-,ստոր- ածանցներով,
մակբայ –ուստ, -ովին ածանցներով (3 միավոր):
- 5. Նշե՛ք՝ ո՞ր հայերենով է տրված հատվածը (1 միավոր):**
Էրնեկ ես անոր կու տամ, որ առեր իւր եարն փախեր.
Ոնց որ ըզկարմունջն անցներ, ջուրն ելեր, զկարմունջն է տարեր:
- 6.Դու՛րս գրեք արևմտահայերենին հատուկ հինգ բառ ու քերականական ձև, նշե՛ք դրանց արևելահայ տարբերակները (2 միավոր):**
Վանականին քերթվածն է աս, պարզ, և սակայն ամբողջական հոգեբանությամբ մը,
միստիկականության ցավագին վեպ մը, ուր կտեսնենք սիրով լեցված էակ մը՝
աստուծոտարփանքովը վառված, որ անոր մեծությունը կերգե:
- 7.Տրված բանաստեղծական հատվածում նշե՛ք արտահայտչական-պատկերավորման միջոցները (2 միավոր):**
Պատուհանըս մատնահարեց ու անցավ
Հովնհերարձակ աշունին,
Չարաճրճի, ինչպես աղջիկ մը, ինչպես
Խաղընկեր մը՝ դըրան ետին մոռցրված:
- 8.Շարադրություն՝ <<Մտորումներ Օիժեռնակաբերդի ճանապարհին>> վերնագրով (2 էջի սահմաններում) (5 միավոր):**

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈԻԼ
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2015

12-րդ դասարան (տևողությունը 180 րոպե)

1. Գտե՛ք սխալը, նշե՛ք տեսակը (3 միավոր):

ա. Աշտարակի թեքության մասին մարդիկ հետագայում տարածեցին զանազան հակամետ և թյուր կարծիքներ:

բ. Հիմա միայն Պարրոտը հասկացավ, որ Արարատին՝ որպես հայության անխախտ սյուն, սրբություններից ամենանվիրականն են համարում:

գ. Տուշպա քաղաքի՝ բարձրաբերձ պարիսպներով և ամրակուռ դարպասներով միջնաբերդի ամրացումը կապված է իրեն անվան հետ:

2. Բացատրե՛ք տրված հարանուն բառերի իմաստները (3 միավոր):

ա. լիակատար	բ. տարագրություն	գ. հավակնոտ
լիիրավ	տարեգրություն	հավակնորդ

3. Տրված բառակապակցությունների իմաստներն արտահայտե՛ք մեկ բառով (2 միավոր).

ա. կաթուղիկ եկեղեցու վանահայր, բ. գյուղական խաղաղ կյանքին նվիրված ստեղծագործություն,

գ. խակ խաղող, դ. կռունկների խումբ:

4. Բացատրե՛ք տրված դարձվածքների իմաստները (2 միավոր).

Երկնագույն արյուն, ծոծրակը քորել, կոկորդում նստել, ձայն բարբառո հանապատի:

5. Դուրս գրե՛ք արևմտահայերենին հատուկ հինգ բառ ու քերականական ձև, նշե՛ք դրանց արևելահայ տարբերակները (3 միավոր):

Յուր արհեստն ալ սիրո միջնորդությունն էր. այրերուն կին կը գտներ, կիներուն այր կը մատակարար և զանոնք իրարու հետ ամուսնացնելով՝ յուր աշխատության վարձքը կընդուներ:

6. Գրաբարով տրված հատվածը թարգմանե՛ք աշխարհաբար (1 միավոր):

Յամենայն ժամ աղաչանք իմ այս են՝

Ի մեղաց իմոց սուրբ արա զիս, Տեր:

7. Նշե՛ք՝ գործառական ո՞ր ոճով է շարադրված տրված հատվածը (1 միավոր):

Տիգրանակերտը պատմական Հայաստանի արքայանիստ քաղաք էր Աղձնիք նահանգում:

ՏիգրանՄեծը, հայոց գործի գլուխն անցած, իրար հետևից հպատակեցնում է սահմանամերձ թագավորությունները՝ ընդարձակելով Հայկական լեռնաշխարհի սահմանները:

8. Շարադրություն՝ «Մտորումներ Միծեռնակաբերդի ճանապարհին» վերնագրով (2 էջի սահմաններում) (5 միավոր):